ՀՀ Արմավիրի մարզի Աղավնատուն համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ ՀՀ Արմավիրի մարզի Աղավնատուն համայնքի գյուղապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի /ծածկագիր 2.3-2/ համայնքային ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար:

Գլխավոր մասնագետը.

Կատարում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարությունները ժամանակին և պատշաճ որակով: Իր կողմից մշակված իրավական ակտերի նախագծերի, ծրագրային փաստաթղթերի փորձաքնության ուղարկելու անհրաժեշտության մասին առաջարկություններ է ներկայացնում աշխատակազմի քարտուղարին: Անհրաժեշտության դեպքում՝ աշխատակազմի քարտուղարի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ մասնակցում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին: Անհհրաժեշտության դեպքում, իր լիազորությունների սահմաններում նախապատրաստում է և աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկույցներ և այլ գրություններ: Իրականացնում է քաղաքացիների դիմում – բողոքների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում է քարտուղարին: Ստորագրում է իր կողմից պատրաստվող փաստաթղթերը: Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է համայնքի բյուջեի նախագծի, տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ որոշման նախագծերի նախապատրաստման աշխատանքներին: Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է գույքային հարկերի գործող տեղեկատվական ավտոմատացված համակարգի ծրագրային ապահովումը, «Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգով», աշխատանքների իրականացումը, էլեկտրոնային եղանակով հարկային հաշվետվությունների իրականացումը: Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ: Գլխավոր մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է.

բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ :

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ», «Հանրային ծառայության մասին», «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Իրավական ակտերի մասին» «Հաշվապահական հաշվառման մասին», «Բյուջետային համակարգի մասին», «Գանձապետական համակարգի մասին», «Գնումների մասին», «Եկամտային հարկի մասին», ՀՀ օրենքների, Աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում, համակարգչով և ժամանակակից տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթը կանցկացվի 2015 թվականի մարտի 6-ին ժամը 12.00-ին Աղավնատուն համայնքի գյուղապետարանի շենքում (գյուղ Աղավնատուն Ն.Մաթևոսյան պող 25 հասցե): Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն ՀՀ քաղաքացիները և ՀՀ փախստականի կարգավիճակ ունեցող անձինք / այսուհետ՝ քաղաքացիներ/:

Դիմող քաղաքցիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

. դիմում մրցույթային հանձնաժողովի անունով / ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/

.տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի դիպլոմ /ների/, վկայականի/ների/, պատճենները՝ բնօրինակների հետ միասին,արական սեռի անձինք նաև զինվորոկան գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք

. մեկ լուսանկար 3x4 սմ չափսի

. անձնագրի պատճենը:

Քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերն իրենց ցանկությամբ Աղավնատուն համայնքի գյուղապետարանի աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչություն են հանձնում անձամբ՝ ներկայացնելով անձնագիր: Քաղաքացիները մրցույթին ներկայանում են անձնագրի, դիպլոմի, աշխատանքային գրքույկի, իսկ արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակները:

Դիմումների ընդունման վերնաժամկետն է 2015 թվականի փետրվարի 20-ը, ժամը 9.00- 18.00, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները փաստաթղթեր հանձնելու, լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել Աղավնատուն համայնքի գյուղապետարանի աշխատակազմ (հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ գ. Աղավնատուն Ն.Մաթևոսյան պող. 25, հեռ 0231-6-00-75 կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչություն՝ ք.Արմավիր, Աբովյան 71, հեռ 0237-2-07-70):